ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1956—1970)

ԳԵՎՈՐԳ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՍՄԿԿ XX համագումարը մասնավորապես նշեց, որ «կուլտուրական շինարարության, աշխատավորների կոմունիստական դաստիարակության լայն ծրագիրը դրեց աճող սերնդի դաստիարակության ու կրթության ամբողջ սիստեմը լրջորեն բարելավելու անհրաժեշտության հարցը»[1]։ Այդ մեծ առաջադրանքները կյանքի կոչելու գործում իրենց լուրջ անելիքներն ունեին նաև ֆիզկուլտուրայի և սպորտի կազմակերպությունները։ Կենսագործելով համագումարի որոշումները, հանրապետության հասարակական կազմակերպությունները, Հայաստանի կոմկուսի ղեկավարությամբ, սկսեցին մեծ ուշադրություն դարձնել ֆիզիկական կուլտուրային, մշակելով իրենց ամենօրյա գործունեության մեջ աշխատանքային նոր ձևեր ու մեթոդներ։

1956 թ. հունվարի 19—21-ը տեղի ունեցած ՀԿԿ XVIII համագումարը լուրջ ուշադրություն դարձրեց նաև երիտասարդության ֆիզիկական դաստիարակության և նրա շրջանում տարվող սպորտմասսայական աշխատանքներին։ Համագումարի որոշման մեջ շեշտված էր առաջիկա տարիներին հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ տարվող աշխատանքների ուժեղացման անհրաժեշտությունը[2]։

Գիտության և տեխնիկայի առաջընթացին համաքայլ, առաջնահերթ հարց համարվեցին ֆիզկուլտուրան աշխատավորների կենցաղում արմատավորելը, «Պատրաստ աշխատանքի և ՍՍՀՄ պաշտպանության» համալիրի մասսայական արմատավորումը, տուրիզմը, ակտիվ հանգստի միջոցները, արտադրական մարմնամարզությունը և առողջական տարբեր միջոցներն ու ձևերը։ Մասսայական ֆիզկուլտուրայի հիմնական օջախների՝ ֆիզկուլտուրայի սկզբնական կոլեկտիվների կազմակերպական ամրապնդումը դարձավ կուսակցության սկզբնական, շրջանային, քաղաքային կազմակերպությունների, արհմիութենական, կոմերիտական կոմիտեների ու մարզական կազմակերպությունների կարևոր խնդիրը։

Երկրում ֆիզկուլտուրայի և սպորտի վերելքի ապահովման ուղղությամբ հսկայական դեր խաղաց ՍՍՀՄ ժողովուրդների առաջին սպարտակիադան։ Հայկական ՍՍՀ-ի աշխատավորները մեծ ոգևորությամբ ընդունեցին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը «ՍՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի նախապատրաստության ու անցկացման մասին» (1955 թ. հունվարի 22)։ 1955 թ. մարտի 5-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ծավալուն միջոցառումներ ընդունեց ՍՄԿԿ Կենտկոմի այդ որոշման կենսագործման ուղղությամբ։ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեին պարտավորեցրեց հանրապետական սպարտակիադան անցկացնել սպարտակիադայի ծրագրով նախատեսված բոլոր ձևերից՝ 2000 մարզիկների մասնակցությամբ։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առաջարկվեց քննարկել և հաստատել հանրապետական սպարտակիադայի կանոնադրությունը։ Կուսակցության քաղկոմ-շրջկոմներին հանձնարարվեց ձեռնարկելու անհրա-

---

1 «ՍՄԿԿ պատմություն», Երևան, 1971, էջ 814։

2 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 80, գ. 56, թ. 405։

ժեշտ միջոցառումներ՝ քաղաքներում ու շրջաններում բարելավելու ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքների վիճակը, սպարտակիադայի վերաբերյալ հարցերը քննարկելու կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների ժողովներում[3]։

ՀԿԿ Երևանի քաղկոմը, մշտապես ուշադրության կենտրոնում պահելով աշխատավորության ու երիտասարդության շրջանում սպորտ-մասսայական աշխատանքների կազմակերպման և սպորտի նյութական բազայի ամրապնդման հարցերը, 1956 թ. մարտի 1-ին քննարկեց «Սպարտակ» ընկերության գործունեության հարցը ՍՍՀՄ ժողովուրդների սպարտակիադային նախապատրաստվելու կապակցությամբ[4], իսկ 1956 թ. հունիսին հավանություն տվեց 26 կոմիսարների շրջանում շաբաթօրյակների միջոցով սպորտային այգու շինարարություն իրականացնելու նախաձեռնությանը[5]։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի որոշումների լույսի տակ հանրապետության արհմիութենական կազմակերպությունները լայն գործունեություն ծավալեցին ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքների կազմակերպման ուղղությամբ։ Այդ գործունեությունը մեծ թափ ստացավ 1956 թ.՝ ՍՍՀՄ ժողովուրդների առաջին սպարտակիադայի մասսայական միջոցառումների անցկացման տարում։ Համխ-ի նախագահությունը լսեց «Հայէլեկտրո» գործարանի դիրեկտորի զեկուցումը՝ բանվոր-ծառայողների շրջանում տարվող ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքների մասին[6]։

Սպորտային բոլոր տեսակի աշխատանքները ուղղված էին մեկ հիմնական նպատակի՝ կազմ ու պատրաստ դիմավորելու 1956 թ. օգոստոսին Մոսկվայում կայանալիք ՍՍՀՄ ժողովուրդների առաջին սպարտակիադան։ 1956 թ. հունիսին Երևանում անցկացված հանրապետական սպարտակիադայի մասնակիցներից տասը լրացրեցին սպորտի վարպետի (թեթև ատլետիկա, մարմնամարզություն, գնդակային հրաձգություն, ժամանակակից հնգամարտ), իսկ 90-ը՝ առաջին կարգայինի նորմա, սահմանվեցին համահայաստանյան 12 նոր ռեկորդ, իսկ թեթև ատլետ Վարդան Հովսեփյանը, գունդը հրելով 17 մ 28 սմ, սահմանեց Սովետական Միության նոր ռեկորդ[7]։

Հանրապետության սպորտային կազմակերպությունների ու մարզիկների համար ՍՍՀՄ ժողովուրդների առաջին սպարտակիադան մեծ քննություն հանդիսացավ։ Հայաստանի պատվիրակությունն իրեն լավ դրսևորեց, գրավելով 9-րդ տեղը (հանրապետությունների հաշվարկով 7-րդ տեղը)։ Հայ մարզիկները սահմանեցին մեկ միութենական և 18 հանրապետական ռեկորդ, նվաճեցին հինգ ոսկե և ինը արծաթե ու բրոնզե մեդալ։ Նրանց հանձնվեց ՍՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի 63 դիպլոմ և ժամանակակից հնգամարտի գավաթը՝ թիմային առաջնության համար[8]։ «Պրավդա» թերթը նշեց, որ «սովետական մարդկանց բերկրանք է պատճառում նաև Հայաստանում մասսայական սպորտի և ֆիզկուլտուրայի վարպետության աճը»[9]։

Սպարտակիադայի նախապատրաստության օրերին հանրապետությունում մասսայական ֆիզկուլտուրայի զարգացման նկատմամբ ՀԿԿ Կենտկոմի հոգատարության փայլուն վկայությունն էր «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթի հիմնադրումը, որի առաջին համարը լույս տեսավ հենց համահայաստանյան սպարտակիադայի բացման օրը՝ 1956 թ. հունիսի 24-ին[10]։

---

3 Նույն տեղում, ց. 83, գ. 38, թ. 151—152։

4 Նույն տեղում, ֆ. 47, ց. 36, գ. 172, թ. 159։

5 Նույն տեղում, գ. 173, թ. 19։

6 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ), ֆ. 65, ց. 15, գ. 15, թ. 4։

7 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 83, գ. 38, թ. 151—152։

8 Նույն տեղում, գ. 70, թ. 71—79։

9 «Правда», 19. VIII. 1956.

10 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 67, գ. 83, թ. 227։

Հանրապետության մարզիկների համար 1956 թ. մեծ քննություն էր նաև միջազգային առումով։ Մելբուռնում անցկացվող 16-րդ օլիմպիական խաղերին հանրապետությունն ուղարկեց իր պատվիրակներին՝ մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանին, բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանին, թեթև ատլետ Վարդան Հովսեփյանին, հնգամարտիկ Իգոր Նովիկովին և սուսերամարտիկ Վալենտին Չերնիկովին։ Սովետական Հայաստանի ընտրյալներն այստեղ բարձր պահեցին Սովետական Միության մարզական պատիվը։ Վլադիմիր Ենգիբարյանը և Ալբերտ Ազարյանը նվաճեցին ոսկե մեդալներ, թիմային առաջնության համար ոսկե մեդալով պարգևատրվեց նաև Իգոր Նովիկովը[11]։

Հանրապետության ֆիզկուլտուրայի կոլեկտիվների ամրապնդման և դրանց գերի բարձրացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1958 թ. մայիսի 8-ին տեղի ունեցած Համխ-ի 8-րդ համագումարը։ Այն նշեց, որ հանրապետության ձեռնարկություններում, հիմնարկություններում, կառույցներում, սովխոզներում և ուսումնական հաստատություններում կազմակերպված է 385 ֆիզկուլտուրայի կոլեկտիվ, որոնցում ընդգրկված է ավելի քան 37 հազար ֆիզկուլտուրնիկ. նրանցից 30380-ը կամավոր սպորտային ընկերությունների անդամներ էին։ 1956—57 թթ. պատրաստվել էին առաջին կարգի 590, երկրորդ կարգի՝ 2000, երրորդ կարգի՝ 8156 և պատանեկան կարգերի 1381 մարզիկ։ Միաժամանակ պատրաստվել էր ՊԱՊ համալիրի 14916 կրծքանշանակիր։ Հանրապետության արհմիություններն ունեին ՍՍՀՄ-ի սպորտի 48 վարպետներ և չեմպիոններ։ Արտադրական մարմնամարզությունն արմատավորված էր 70 խոշոր ձեռնարկություններում[12]։ Համագումարը, գնահատելով կատարված աշխատանքը, միաժամանակ Համխ-ին և ճյուղային արհմիությունների հանրապետական կոմիտեներին պարտավորեցրեց ամրապնդել «Աշխատանք» և «Բուրևեստնիկ» կամավոր սպորտ ընկերությունները, լայն օգնություն ցույց տալ ֆաբրիկագործարանային, շինարարական և տեղական կոմիտեներին, ուժեղացնել ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքները տեղերում, բանվոր-ծառայողների լայն մասսաներին, հատկապես երիտասարդությանը ընդգրկել այդ աշխատանքների մեջ, ձեռնարկություններում և հիմնարկներում ավելի ընդլայնել ու ակտիվորեն կիրառել արտադրական մարմնամարզությունը[13]։

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացմանը մեծ նշանակություն տվեց ՍՄԿԿ XXI համագումարը։ Այն նշեց, որ պատմական նոր ժամանակաշրջանում, երբ պետական հարցերի որոշման մեջ ավելի մեծ նշանակություն է ստանում աշխատավորների մասսայական կազմակերպությունների դերը, այլևս անհրաժեշտություն չի զգացվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ղեկավարությունը կենտրոնացնել պետական մարմինների ձեռքում և կան բոլոր հնարավորությունները, որպեսզի ֆիզկուլտուրային շարժումը մեր երկրում ամբողջովին հենվի դեմոկրատական լայն հիմունքների վրա և նրա ղեկավարությունը կենսագործվի հասարակական ընտրովի կազմակերպության կողմից։ Դրան համապատասխան կուսակցությունը և կառավարությունը 1959 թ. հունվարի 9-ին ընդունեցին «Երկրում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ղեկավարման մասին» որոշումը։ ՀՍՍՀ սպորտային ընկերությունների և կազմակերպությունների միություն ստեղծելու մասին համապատասխան որոշում ընդունեց նաև ՀԿԿ Կենտկոմը։ Հանրապետության բոլոր քաղաքներում և շրջաններում սկսեցին անցկացնել սպորտային ընկերությունների ու կազմակերպությունների հիմնադիր կոնֆերանսներ[14]։

ՀԿԿ Կենտկոմը 1959 թ. հունվարին ծավալուն որոշում ընդունեց «Հանրապետական հինգերորդ սպարտակիադայի անցկացման և ՍՍՀՄ ժողովուրդների

---

11 «Правда», 13. VII. 1956.

12 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 65, թ. 84—85։

13 Նույն տեղում, թ. 352։

14 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 83, գ. 164, թ. 122—123։

1959 թ. երկրորդ սպարտակիադային նախապատրաստվելու մասին»[15]։ Համահայաստանյան 5-րդ սպարտակիադան, որն անցկացվեց 1959 թ. հունիսին, ցույց տվեց ֆիզկուլտուրայի շարժման առաջընթացը հանրապետությունում։ Նախորդ սպարտակիադային մասնակցած 92355 մարզիկների փոխարեն այս անգամ սպարտակիադայի բոլոր փուլերում անցկացված միջոցառումներին մասնակցեցին 139303 մարզիկներ։ Սպարտակիադայի նախապատրաստական շրջանում հանրապետության քաղաքներում ու շրջաններում ստեղծվեցին ֆիզկուլտուրայի 104 նոր կոլեկտիվներ։ Նախորդ սպարտակիադայի համեմատությամբ, ֆիզկուլտուրնիկների թիվն ավելացել էր 31 հազարով։ Հանրապետությունում հաշվվում էին սպորտի 191 վարպետներ, ավելի քան 32800 կարգային սպորտսմեններ։ Միայն 1959 թ. առաջին ամիսներին սահմանվել էր Հայաստանի 32 նոր ռեկորդ, զգալիորեն ընդլայնվել էր սպորտային բազաների ցանցը. աչքի ընկնող նվաճումների էին հասել մանավանդ հնգամարտիկները, բռնցքամարտիկները, մարմնամարզիկները[16]։

Սակայն, չնայած ձեռքբերումներին, հանրապետությունում ֆիզկուլտուրայի մասսայականությունն ապահովելու գործում կային զգալի թերություններ, որոնց վրա հատուկ ուշադրություն դարձրեց 1964 թ. հունվարի 7-ին բացված ՀԿԿ XXIII համագումարը[17]։ Այն հանրապետության կոմերիտական, արհմիութենական և մարզական կազմակերպություններից պահանջեց կարճ ժամանակամիջոցում վերացնել ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում եղած լուրջ թերությունները, վճռական միջոցներ ձեռնարկել ամրապնդելու ֆիզկուլտուրայի կոլեկտիվները, ուժեղացնելու ֆիզկուլտուրային սպորտի շարժումը նախադպրոցական հիմնարկներում, միջնակարգ դպրոցներում և բուհերում, հիմնարկներում, ձեռնարկություններում, կոլտնտեսություններում և սովխոզներում[18]։

Համագումարից հետո ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հանգամանորեն քննարկեց հանրապետությունում մասսայական ֆիզկուլտուրայի ու սպորտի հետագա բարելավման միջոցառումների հարցը և նշեց, որ հանրապետության կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և ֆիզկուլտուրային կազմակերպությունները որոշակի աշխատանք են կատարել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման գործում, մեծացել է ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվողների քանակը, մարզիկների վարպետության բարձացման և ֆիզկուլտուրային կոլեկտիվների ստեղծման համար կազմակերպվել են որոշ միջոցառումներ։ Այնուհետև նախագահությունը նշեց, որ չնայած դրան կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները դեռևս թույլ են զբաղվում ֆիզկուլտուրային աշխատանքներով։ Ինչպես ցույց տվեցին Հայկական ՍՍՀ ֆիզկուլտուրային կոլեկտիվների ելույթները ՍՍՀՄ ժողովուրդների ամառային 3-րդ սպարտակիադայում, կոլեկտիվների և առանձին մարզիկների սպորտային արդյունքները ետ էին մնում երկրում ֆիզկուլտուրայի և սպորտի ընդհանուր աճից։

Սպորտի և ֆիզկուլտուրայի հետագա զարգացման բնագավառում ՀԿԿ առաջ քաշած խնդիրներն ուղեցույց դարձան հանրապետության կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և մարզական կազմակերպությունների համար։ Ստեղծագործական որոնումները առաջընթացի նոր ուղիներ բացեցին։ Մնում էր առավ տնային կառավարչություններին կից և բնակելի շենքերում ֆիզկուլտուրայի կոլեկտիվների ստեղծումը, ծավալվեցին բնակելի զանգվածներում մարզական միջոցառումների սիստեմատիկ անցկացումը, ֆիզկուլտուրայի կոլեկտիվների միջև բազմաստիճան ստուգատեսների կազմակերպումը, առաջին պլան մղվեցին արտադրական մարմնամարզությունը, ակտիվ հան-

---

15 Նույն տեղում, գ. 129, թ. 122—123։

16 «Սովետական Հայաստան», 20. VI. 1959։

17 ՄԿՀԱ, ֆ. 1, ց. 89, գ. 38, թ. 241—242։

18 Նույն տեղում։

գրստի ձևերն ու միջոցները։ Այս ամենը տվեց դրական արդյունքներ և սպորտ միության հանրապետական երկրորդ կոնֆերանսն արդեն 1964 թ. Հայաստանի կոմկուսի Կենտկոմին և Մինիստրների խորհրդին զեկուցեց, որ հանրապետությունում ֆիզկուլտուրայով զբաղվողների թիվը հասել է 324351-ի, պատրաստված են 101 սպորտի վարպետներ, 805 առաջին, 40040 այլ կարգերի մարզիկներ, որ ՊԱՊ համալիրի նորմաները հանձնողների թիվը կազմել է 211081 մարդ։ Հանրապետությունում 210815 աշակերտներ ընդգրկված էին ֆիզկուլտուրայի մշտական պարապմունքներում, նրանցից 138 հազարը մասնակցում էր արտադասարանական մարզական պարապմունքներին, 13468-ը պարապում էր մարզադպրոցներում[19]։

Ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքների հարցն իր ուշադրության կենտրոնում էր պահում նաև ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեն։ Քաղաքային կուսակցական կոնֆերանսներում, քաղկոմի պլենումի և բյուրոյի նիստերում, ակտիվի ժողովներում մշտապես քննարկվում էին ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքի կազմակերպման հետ կապված հարցեր։ Այսպես, օրինակ, կուսակցության Երևանի կազմակերպության 30-րդ կոնֆերանսը (1963 թ. դեկտեմբեր) կուսակցության շրջանային կոմիտեներից և տնտեսական կազմակերպություններից պահանջեց միջոցառումներ մշակել 1964—65 թթ. բակերում և հանգստի գոտիներում աշխատավորների ակտիվ հանգստի կազմակերպման պայմաններ ստեղծելու համար, այդ գործում ակտիվորեն ներգրավելով ազգաբնակչությանը։ Կոնֆերանսը ուշադրություն դարձրեց բակերի բարեկարգման հարցին, պահանջելով ստեղծել սպորտային, երեխաների մարզումների և խաղերի հրապարակներ[20]։ Կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեն առանձնակի ուշադրություն էր դարձնում սպորտի նյութական բազայի հարստացմանը։ 1963 թ. քաղկոմի բյուրոյում քննարկվեց սպորտային բազաների շինարարության վիճակը, իսկ վեց ամիս հետո (1964 թ. փետրվար) բյուրոյի քննարկմանը ներկայացվեց քաղաքում սպորտային կառույցների շինարարության և շահագործման հանձնելու հարցը[21]։

Հայաստանի մարզական շարժման հետագա զարգացման գործին նշանակալից չափով նպաստեց 1965 թ. մայիսին տեղի ունեցած Հայկական ՍՍՀ 6-րդ գումարման Գերագույն սովետի 5-րդ նստաշրջանը, որը քննարկեց «Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վիճակի և նրա հետագա բարելավման միջոցառումների մասին հարցը»։ Նստաշրջանն արձանագրեց, որ հանրապետության 339 հազար ֆիզկուլտուրնիկներից (որը, ի դեպ, կազմում էր բնակչության 16,4%-ը) 41,3%-ը դպրոցականներ են, 2,8%-ը՝ բուհերի և տեխնիկումների ուսանողներ, 23,4%-ը՝ բանվորներ ու ծառայողներ, 29,9%-ը՝ գյուղական երիտասարդներ, 26,6%-ը՝ պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարանների սովորողներ։ Միայն 1964 թ. պատրաստվել էր 49 հազարից ավելի կարգային և սպորտի վարպետ[22]։

Այս բոլորը վկայում էին, որ հանրապետությունում զգալի աշխատանք էր կատարվել, բայց դեռևս շատ էին նաև անելիքները. առկա բոլոր հնարավորությունները չէին նպատակամղվել այն բանին, որպեսզի ֆիզկուլտուրան արմատավորվի յուրաքանչյուր աշխատավորի կենցաղում։ ՀՍՍՀ Գերագույն սովետն իր որոշմամբ հանրապետության պետական և հասարակական բոլոր կազմակերպությունների կարևորագույն խնդիրը համարեց «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի արմատավորումը ժողովրդի կենցաղի մեջ, մանկական վաղ հասակից սկսած ֆիզիկապես ամուր երիտասարդ սերնդի դաստիարակության

---

19 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 745, ց. 4, գ. 331, թ. 2։

20 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 47, ց. 46, գ. 6, թ. 11—12։

21 Նույն տեղում, գ. 7, թ. 6—7։

22 «ՀՍՍՀ Գերագույն սովետի 6-րդ գումարում, 5-րդ սեսիա, սղագրական հաշվետվություն», Երևան, 1955, էջ 7։

ապահովումը, նրա ֆիզիկական ու հոգևոր ուժերի ներդաշնակ զարգացումը»[23]։

ՍՄԿԿ XXIII համագումարը մեծ ուշադրություն դարձրեց ֆիզկուլտուրայի և սպորտի հետագա զարգացման հարցին և խնդիր դրեց ֆիզկուլտուրայի շարժումը դարձնել համաժողովրդական, մեծացնել մարզական բնագավառի նյութատեխնիկական բազան։

Ֆիզկուլտուրային շարժման զարգացման սկզբունքային պրոբլեմներն առավել հստակ ձևով արտահայտվեցին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման միջոցառումների մասին» որոշման մեջ (օգոստոս 1966 թ.)։ Նրանում ասվում է, որ «սովետական ֆիզկուլտուրային շարժումը պետք է կրի իսկական համաժողովրդական բնույթ, հենվի ֆիզիկական դաստիարակության հիմնավոր գիտական սիստեմի վրա, որը հետևողականորեն ներգրավում է բնակչության բոլոր խմբերը, սկսած մանկական հասակից»[24]։ Նկատելով այս որոշման դրույթներից, ՀԿԿ Կենտկոմն ու ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1966 թ. դեկտեմբերի 1-ին քննարկեցին «Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման միջոցառումների մասին» հարցը[25]։ Քննարկման ժամանակ անբավարար համարվեց այն փաստը, որ 1966 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության ազգաբնակչության միայն 16,4%-ն էր ընդգրկված ֆիզկուլտուրային շարժման մեջ։ Վիճակը վատ էր հատկապես կանանց շրջանում, որոնք կազմում էին ֆիզկուլտուրնիկների թվի միայն 27,5%-ը։

Ընդունված համապատասխան որոշման մեջ նշվում էր, որ «առանձին մարզաձևերի անհավասարաչափ զարգացումը, պատրաստված մարզիկների սահմանափակ քանակը, նրանց ցածր որակավորումը հանդիսանում էին կազմակերպական և ուսումնադաստիարակչական թույլ աշխատանքի, ֆիզկուլտուրայի կադրերի, հատկապես մարզիչների և դատավորների ոչ ճիշտ ընտրության արդյունքը»։ Որոշման մեջ այնուհետև ասվում էր, որ «նշված թերությունները նկատելիորեն քիչ կլինեն, եթե կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական և տնտեսական կազմակերպությունները մեծ հոգատարություն հանդես բերեին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, ֆիզկուլտուրային շարժման նյութական բազայի ամրապնդման նկատմամբ»[26]։

ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի այս որոշումը նոր և պատասխանատու խնդիրներ էր դնում հանրապետության կուսակցական, արհմիութենական, սովետական և կոմերիտական կազմակերպությունների առջև։ Ամենուր ակտիվ աշխատանքներ էին կատարվում կուսակցության և կառավարության կանխագծումները կենսագործելու համար։ 1967—1968 թթ. ընթացքում հանրապետությունում կառուցվեց 127 մարզադահլիճ, 25 լողավազան, մեծ քանակությամբ ֆուտբոլի, բասկետբոլի հրապարակներ ու խաղադաշտեր[27]։ Կառուցվեցին մասնավորապես Ծաղկաձորի 4,5 կմ երկարությամբ ճոպանուղին, Երևանում Հրազդանի ձորի 25 մետրանոց ծածկած լողավազանը, թենիսի ծածկած կորտը և այլ կառույցներ։ 1967 թ. շահագործման հանձնվեց ՍՍՀՄ սպորտային բազան Ծաղկաձորում, որն իր հարմարություններով և ծավալով լավագույնն է Եվրոպայում։ Մեկ և կես տարում կառուցված այս խոշոր համալիրը դարձավ Սովետական Միության հավաքական թիմերի մարզումների և պարապմունքների լավագույն բազան միջին լեռնային գոտում (2000 մ) և մեծ ծառայություն մատուցեց սովետական օլիմպիական հավաքականին՝ Մեխիկոյի օլիմպիական խաղերին նախապատրաստվելիս[28]։

---

23 Նույն տեղում, էջ 11։

24 «Правда», 25. VIII. 1966.

25 ՍԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 92, գ. 71, թ. 85։

26 Նույն տեղում։

27 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 745, ց. 4, գ. 349, թ. 31։

28 Նույն տեղում, թ. 8։

ՀՍՍՀ-ում կուսակցության ու կառավարության որոշման կատարման առաջին ազդակը հանդիսացավ 1966 թ. համահայաստանյան 8-րդ սպարտակիադան։ Այդ ստուգատեսի նախօրյակին հանրապետությունում ֆիզկուլտուրնիկների թիվը, 1963 թ. համեմատությամբ, աճել էր 15931 մարդով և հասել 350232-ի։ Մարզական վարպետության առաջընթացի վկայություն էր այն, որ սպարտակիադայի եզրափակիչ մրցումներում ծնվեց հանրապետական 12 ռեկորդ, լրացվեց սպորտի վարպետի 28 նորմա (որից 10-ը առաջին անգամ), սպորտի վարպետության թեկնածուի 60 և 121 առաջին կարգ։ Սպարտակիադայում մեկնարկի դուրս եկան ավելի քան 250 հազար մարդ։ Մրցումների ընթացքում սահմանվեց հանրապետական 32 ռեկորդ։ Սպարտակիադայի բոլոր փուլերում մասնակիցներից առաջին անգամ միջազգային կարգի սպորտի վարպետի նորմա լրացրեց 2, ՍՍՀՄ վարպետի՝ 43, սպորտի վարպետության թեկնածուի, առաջին և երկրորդ կարգի՝ 3427, երրորդ կարգայինի՝ 9152 մարդիկ[29]։

Հանրապետությունում ֆիզկուլտուրային շարժմանը մեծ չափով օգնում էր Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտը։ Արդեն 1960-ական թվականներին ինստիտուտի գիտափորձարարական աշխատանքները միութենական և միջազգային ճանաչում ստացան։ 1960-ական թվականներին ինստիտուտը հրատարակեց մոտ 900 գիտամեթոդական աշխատանք։ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի տեսության և պրակտիկայի նորագույն պահանջներից ելնելով՝ 1962 թ. ինստիտուտում ստեղծվեց սպորտային մարզումների տեսության և մեթոդիկայի պրոբլեմային լաբորատորիա[30]։

Երկրում ֆիզկուլտուրայի շարժման զարգացման մասին ՍՄԿԿ XXIII համագումարի կողմից ներկայացված համաժողովրդական պահանջը ՍՄԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության կողմից ամրապնդվեց մի կարևոր միջոցառումով՝ ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքների ղեկավարումը հանձնվեց պետական տնօրինությանը։ Կոմիտեների վերականգնումը, որպես պետական վարչական մարմնի, հնարավորություն տվեց բարձրացնելու ֆիզկուլտուրային կազմակերպությունների պատասխանատվությունը, ավելի նպատակամղված և արդյունավետ օգտագործելու դրանց հնարավորությունները, որոշակիորեն սահմանափակելու անտարբերության դեռևս չվերացված փաստերը, պաշտոնագրությունն ու գերատեսչականությունը։

ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1969 թ. փետրվարի 14-ին որոշում ընդունեցին հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի ղեկավարումը բարելավելու մասին։ ՀՍՍՀ սպորտային ընկերությունների և կազմակերպությունների միության հանրապետական խորհրդի բազայի վրա ստեղծվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կոմիտե, որով հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի ղեկավարումը անցավ պետական մարմնի ձեռքը։ Կոմիտեին, որպես պետական մարմնի, տրվեցին անհրաժեշտ բոլոր իրավունքները՝ հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքների ղեկավարման համար[31]։

Ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայական զարգացման ասպարեզում հանրապետության կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և սպորտային կազմակերպությունների կատարած աշխատանքը դրական արդյունքներ տվեց։ 1956—1970 թթ. հանրապետության մարզական պատմության մեջ բավականին որակական փոփոխություններ տեղի ունեցան, որոնք արտահայտվեցին ինչպես մասսայական ֆիզկուլտուրայի զարգացման, այնպես էլ մարզիկների վարպետության վերելքի գործում։

---

29 «ՀՍՍՀ 7-րդ, 8-րդ սպարտակիադաների արդյունքները», Երևան, 1967, էջ 198։

30 «Սպորտային կադրերի դարբնոց», Երևան, 1978, էջ 75։

31 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 745, ց. 4, գ. 356, թ. 1։

ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМПАРТИИ АРМЕНИИ И ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО МАССОВОМУ РАЗВИТИЮ ФИЗКУЛЬТУРЫ И СПОРТА (1956—1970)

ГЕВОРК ЖАМГАРЯН

Резюме

В послевоенные годы в решениях съездов партии и Пленумов ее Центрального Комитета КПСС по вопросам идейно-политического и нравственного воспитания советских людей большое место отведено задачам физического воспитания трудящихся. ЦК КПСС и Совет Министров СССР принял по этим вопросам ряд решений, предложив партийным, советским и общественным организациям уделить серьезное внимание массовости физкультурного движения, росту мастерства спортсменов, улучшению учебно-спортивной работы в высших учебных заведениях, школах. В соответствии с этими решениями крупные мероприятия были намечены ЦК КП Армении и Советом Министров Арм. ССР, благодаря чему значительные успехи были достигнуты в развитии физкультурного движения в республике в период 1956—1970 гг.